9. Տերունի տան գլխավորի անունը արձանագրության մեջ չի հիշատակված, հաջորդ Վարդա-ն *վարդապետաւքս բառի սկզբի մասն է։*

10. Երրորդ տողում եռու յԱծածին զ(արդիւնս... իմ հայրենեաց)ցն *պետք է հասկանալ, որ նվիրաբերած արդյունքն իր կալվածքից է։*

Տարբերություններ.— *1. Երկրորդ տողում* Ջալ եկի Սանահինս *կարդացել է* եկի ի վանս Սանահնի։

2. Երրորդ տողում Ջալ վասն *բաց է թողել։*

3. Երրորդ և չորրորդ տողերում իմ հայրենեաց *կարդացել է* իմ հայրենական ջրաղացն։

4. Ջալ չորրորդ տողի միաբանքս ընկալան և հաստատեցին *կարդացել է՝* միաբանքս խոստացան ինձ քառասունք կատարել։ *Շարունակությունը չի կարդացել, միայն 8-րդ տողի նզովքի բառերն է մեջ բերել իր հորինած ձևով* — որ խափանէ կամ զիմ տուեալն խլէ դատի ի տեառնէ։ Վիմ *արտագրել է Ջալ-ից, բայց ավելի կրճատելով և աղավաղելով։*

Նկ. 40. Արձ. № 45։

45. Նախորդի մոտ, նույն քաղի կենտրոնական մասում

(Լուս. № 40)

Հ ՈԿԳ Մ 1214

Հրատարակված է՝ Ջալ 21, Ղրիմ 55, Վիմ 55

1 *Ի Թ. ՈԿԳ։*

2 *Կամաւն Աստ, ես՝ Վասակ, որդի Սմպատայ, եռու յԱծածինս իմ ամուսնոյն*

3 *հոգոյն Ափային ի Բերդիկ գՏիկնաքարին այգին եւ զփոքր այգին, զԳոբռ-*

4 *ոնոնք շինական յազատ ի զԱբէսալմանց հաւղն ամէն շահ ու զէնով։ Ով զիմ տուածս յԱծա-*

5 *ծնէս հանէ, ի սբ հայրապետացն*

6 *նզոված է եւ Ցուդայի մասնակից։ Ընկալաք մեք՝ առաջնորդ սբ ուխտիս Փիլիպոս հայր եւ Գր-*

7 *իգոր վարդապետ, ամէն միաբանաւքս, զՎասակա խնդիրն եւ հաստատեցաք Ափային զամէն էկեղեցիքս մինչ ի*